

899.362.1
d - 35

19 NOV 2011

Ի. ՖԱՎԱՐԱՆ

ԱՎԱՋԱԿ

ԿԱԿՈՆ



899.962.1

հ-35

Վահագին

ՊԵՏԶԻՆ

1937

899.962.1

8-35

մր

ԻԼԻԱ ՃԱՎՃԱՎԱԶԵ

899.962	1	47
8-35	Ծավալաբար համար բայց	
69	10/11/11	
755	17/11/57	
119	22/11/3	
2705	25/11	

ԱՎԱՉԱԿ ԿԱԿՈՆ

(ՊՂԵՄ)

Վրացերեմից թարգմանեց
ԱՐՄ. ՄՈՒՐԳՎԱԼՅԱՆ

47
35

Խմբագիրմիր
Գ. ԱՍԱՏՈՒՐ, ՎԵՍՊԵՐ



ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏՀԱՆՈՒՅՆ

1937

20 JUN 2013

74.640

Արքագրիչ՝ Ս. Շահբազյան
Տել. Խմբագիր՝ Ստ. Ալբունյան

Տուր ապաստան աղքատներին, սորուկներին՝
աղասություն,
Կապըն նրանք ու կհիշեն, և կտան ինձ
միշտ որհնություն
ՇՈԹԱ ՌՈՒՄԲԱՎԵԼԻ

Գլավլիսի լիազոր Կ— 4569. Հրատ. 4115.

Պատվեր 785. Տիրաժ 8000

Տպագր. Մամ. 3/4, մեկ մամ. 51200 Ցիշ

Հեղինակային 1 մամուլ, քուլք 72×105

Յերկան, Պետհրատի տպարան, Լենինի փ., № 65.

Մայրենի յերկնին խալարակրից՝
Պատեց մքուրյան սեվ քողը տրտում.
Լուսնի շողքի տակ՝ լեռների մքին
Ըստվերներն լճիան Ալազան-հովտում:
Գիշերվա պահակ լուսինը սահուն՝
Թագուհու նման նայում եղ հպարտ.
Նրա շողքի հետ՝ խոսում եյին լուռ
Լեռները՝ իրենց զիսով սառցապատ:
Աստղերը հեռու միշտ պեծին տվող՝
Խիմդ եյին առել այն տիսուր գիշեր,
Լուսկյաց յերկրին՝ սիրուհու զգվող
Շողքը նետելով, վորպես լուս-փշեր:
Յեվ այն աստղերի շողքի գգլանքով՝
Հովհանն աննման խոր նիրի եր մտել,
Քայց հողը լեռան՝ անտառում սիրով
Տերեվների հետ իր խաղն եր գտել:

Ալազանն ահա համառ ու անզաւսպ
Գտնօքատ եր ամում, վոնց մարդուց դժգոհ.
Սարերը նրա՝ լոկ տրտութջը խոլ՝
Լուռ լուս եյին մեն ու մտախոհ:
Քնած եր ամեն շնչավոր հետին,
Յեվ ասես հոգմել, յերկինք ու գետին...
Բայց միայն մի տեղ սայլը ծանրաբայլ՝
Ճռում եր անվերջ լուռ ճամբամիջում,
Ու վրան նստած սայլորդի մոայլ
Տիրության յերգը—քախծով եր հեչում:
Այն քախծու յերգը սրտումս և քաղվել՝
Վողրի պես տխուր, նենց մահվան ժամբն.
Թե պատեց խեղնին վիշտը առավել՝
Ամայի պես արդեն կբշի ժամին:

Դնում եր դամդաղ սայլը և համկարծ
Մեկը անտարից ցատկեցրեց իր ձին,
Սայլի մոտ յեկավ, կանգնեց նա հաստատ՝
Վեհություն տալով իր քախծու դեմքին:
— Զե՞ս ցույց տա նամքեն Կուրդի-Գորայի, —
Հարցրեց նա հպարտ՝ անցնող սայլորդին:
— Ինչո՞ւ չե, ախալքեր: Հըն են սարի
Ազ կողմից կանցնես, մի ձոր կա մոտիկ,
Վոր դուրս գաս, սայլի նամքեն և անցնում.
Եղ նամքեն բռնիր, գնա՞՛, ու ահա
Քիրը դուրս ցցած մի սար ես տեսնում,
Հենց եղ ե, վոր կա, ու Կուրդի-Գորան:
Ի՞նչ ունես ենանեղ, — հարցրեց նա վերջում,
Եեր ձիավորին ցույց տվեց նամքան, —

Բանիաշվիլին ենանեղ ե լինում,
Տես, չպատահի ֆեզ փորձանիք, մի բան:
Տեսնում եմ իրես, կուռ ունես դու յել,
Ախալքեր տղերքից կզուես շատին,
Բայց թե կսիրես կյանքը եղ ջահել,
Իսկի չերեվաս դու նրա աչքին,
Յեվ վոչ ել ցույց տուր նժույզըդ նրան,
Թե չե, տես, գլխիդ մի փորձանիք կգա:—
Արագ ե, ինչպես գնդակը քոչող,
Նաև անողոք՝ վազող գնդակից.
Թե պարտ ե արյուն, հենց զիջիր ու քող,
Լավ ե, ձեռք բաշես, ախալքեր, նրանից:
— Դու դարդ մի՛ անի... նրան եմ փնտում,
Հուզվող նրա պես իմ սիրուն ել ջահել.
Նրա պես յես ել կապրեմ անտառում,
Կյանքիցը հիմի յես ձեռ եմ բաշել:

Յեվ ասելուն պես, վոր ձիուն սազեր,
Սլացրեց համկարծ սիրելի իր ձին.
Ու ձին ել քոավ, վորպես մի բազե,
Ժարն արձագանքեց նրա դոփյունին:
Ասես նախանձեց սայլորդը նրան,
«Այս, յերանի ֆեզ» — ասաց իր մտքում.
Գլուխը շարժեց ու վշտի նման
Ինչ-վոր բան իշավ նրա խեղն դեմքին.
Խարազան՝ անխոս՝ վերելում շարժեց
Ու նորից քախծու՝ անցալ իր յերգին:
Կուրդի-Գորայում մի մեծ անտառ կա,
Հնում ապաստան ավազակների.
Սիռելի ու մուրք, հսկա սիրտը փակ,

Խումբ-խումբ ծառերով, անանցանելի:

Այստեղ եր ապրում ավագակ կակոն՝
Բղանիաշվիլին— յելուզակ դժոն:

Վաղուց եր արդեն լուսինը մարել,
Յերբ վոր անտառում, մի ծառի տակին
Բղանիաշվիլին լուս նինջ եր արել՝
Հալածված այսպիս դառնորեն բախտից:
Այստեղ, նրա մոտ, գեղեցիկ մի ձի
Արածում եր հենց քամբ ու սարք վրա.
Տերեվներից, յերբ տալիս եր քամբին,
Խանգարում եր միշտ հանգիստը նրան
Հանկարծ վեր քռավ, ականջը սրեց,
Դրուխը քաշեց ու նայեց վերեվ.
Հետո պըտըտվեց, փնչալ սկսեց
Ու ինչ—վոր մի կողմ աչքը սեվեռեց:
Չեզ յերկար նայեց, ու յերբ վոր լսեց
Դոփյունն այլ ձիու՝ իրեն հանելի,
Խրխնջաց հուժկու, ել չհամբերեց,
Ու յունը փախցրեց տիրոջ աչքերից:
Առյուծի նման վեր քռավ կակոն,
Հրացանը իսկույն կանգնեցրեց վոտի,
Յեզ յերբ վար տեսավ հովտում ձիավոր,
Դռաց «Ո՞վ եւ դու, ասա՛, չե՛մ քողնի,
Քարեկա՞մ ես ինձ, թե մի քշնամի»:

ԶԻԱՎՈՐ

— Քարեկա՞մ եմ քեզ, դու հանգիստ յեղիք:

ԿԱԿՈՆ

— Խիստ բարո՞վ յեկար, բարեկամ—ընկեր,
Թող բարի լինի հանդիպումը մեր:

ԶԻԱՎՈՐ

— Ամե՞ն... Այդ դու չե՞ս Բղանիաշվիլին:

ԿԱԿՈՆ

— Հենց յես եմ, վոր կամ... Ի՞նչ ես կամենում:

ԶԻԱՎՈՐ

— Քեզ հետ միասին՝ մեկ տեղ կյանք ու մահ,
Յեզ քեզ հետ մնալ, ապրել եմ ուզում:

ԿԱԿՈՆ

— Խոսքը դուր յեկավ... Դու յել դուր յեկար,
Դրա համար ել վատահո՞ւմ եմ քեզ:

ԶԻԱՎՈՐ

— Սրտին սիրտ գիտի և ուժին ել՝ ուժ,
Կկիսեմ քեզ հետ վիշտ-ուրախություն:

ԿԱԿՈՆ

— Խո՛շ-գելդի, յեղբայր... Խիստ հարուստ եմ յես,
Այս վող ամտառում իշխում եմ մենակ.
Ունեմ ընդարձակ այսպիս տուն ու տեղ,
Ինձ չի վախեցնում վոստիը տմարդ:
Իմ տունը հրեն ամեն ծառի տակ.

Վորտեղ վոր մքնեց, լուսացնում եմ յեռ-
Յեկ թեն չունեմ ապրաւստի շատ քան,
Բայց ուրախ եմ յես այստեղ հոգեպես...
Անտուն ու անտեր և սոված լինել
Անտառում մենակ՝ գաղանի նման,
Նապատակի պես զգաստ քուն մտնել,
Ու կրել այսպես միշտ գենի ու գրահ.—
Իրավ ե, յերպայր, այս կյանքը հետին
Կարող ե մարդու ճանարարի լինել,
Բայց քախիծն այստեղ մեզ քվում ե լինել,
Վորտեղ իրապես մենք ենք տերը մեր...
Յես ինձ հետ ունեմ յերկար—յեղբայրներ՝
Հըրացան ու քուր ու ատրճանակ...
Չե՞ն դավանանի նրանք ինձ յերրեք,
Քանի յես ունեմ կոներ դեռ արձակ:
Այս ճին ել, յեղբայր, ինձ հետ մեծացել՝
Յեղել ե անհաղթ, յեղել ե համառ.
Հազար փորձանեից՝ ինձ հետ ե անցել,
Յեղել ենք մեկտեղ, տեսել կյանք ու մահ:
Սրանց տրվեցի վտանգի ժամին,
Ու գիտեմ, վոր ինձ չեն դավանանի.
Սիրում ե կակոն միշտ լինել շիտակ,
Յեկ ախպեր-մարդկանց իր կյանքը կտա:
Այսպես եմ հարուստ ահա յես այստեղ...
Եմ տերության մեջ կեղծիք չի լինում,
Անգուք եմ միշտ ել կեղծողների դեմ,
Բայց հավատարմին յե՞ս ել եմ սիրում:
Իշխ'ր, վոր զնանի, իմ տեղը ցույց տամ:
Քեզ բաժին լինի սեղանիցըս քող,

Ու քե չիմեմ կարգին եյուրընկալ,
Խնդրեմ դաշաղիս լինես դու ներոդ:
Զիավորն իսկույն վայր քռավ ճիռոց
Ու սանձը հանեց և շոյեց նրան,
Սկանջը ճգեց, այդպես ե հնուց,
Աշքերը շոյեց գրաւտ մոր նման:
Հանեց յափնջին, յետեվը կապած,
Լիքը խուրչինն ել իշեցրեց նա ցած,
Յեկ ապա զարկեց ձեռքը գավակին,
Քշեց, վոր այնտեղ մոտիկ արածի:
Հետո նա յեկավ ու վորպես մի եյուր
Կակոյի դիմաց կանգնեց վեհ ու լուռ:
Յեկ նրանք աչով իրար չափեցին,
Յերկուսակ իրար լուռ հավան յեկան.
Ու մի ծառի տակ հանգիստ նստեցին.
Յերկուսն ել այսպես լուռ եյին յերկար,
Ասես իրար լավ պրայտում եյին,
Բայց վերջը կակոն խոսեց համարձակ.
— Գիտեմ վոր, յեղբայր, նեղանալու չես,
Ներոդ կիմես հարցունեիս համար.
Ասս, վո՞րտեղից ծանոք եմ յես ֆեզ,
Կամ ինձ տեսնելու ինչպե՞ս սիրու առաք:

ԶԻԱՎՈՐ

Ծանոք-անալ ինձ դժվար չե ֆեզ հետ,
Հապա այս մասին խոսեմ ինչ համգով,
Հեռու յե անցել հռչակը քո մեծ,
Մանուկն ել զիտի, քե ո՞վ ե «կակոն»:
Քեզնից են խոսում մարդիկ ու կանայք,

Ով լեզու ունի, հենց գովում ե ժեզ.
 Հոչակը քո մեծ, վոր նիշտ ե հիմա,
 Հեխյար կը դարձնեն հետնորդները մեր:
 Քո խիզախության մասին են խոսում,
 Անարդար կյանքից այսուղ ես փախել.
 Սիրել ես արդար կյանքն ու գյուղացուն,
 Բարեստրություն,— ա՛յ, ի՞նչ եմ ասել...
 Վոր բախտավորին յեղբայր նանաչես,
 Կարիք կա՞ արդյոք նրան սիրելու,
 Բանն այն ե, սակայն, դու նրա՞ն սիրես,
 Ով անգուր բախտից տառապում ե լուռ:
 Արսեն ե միայն, թե հիշում ես դու,
 Խեղճ, ուսմիկ մարդուն վանց յեղբայր սիրել,
 Բախտն ուսմիկ մարդու, ցալն ու դառնություն.
 Սիրած յեղբար պես նրա հետ կիսել:
 Մարդն ել իսկական հենց նա յե յեղել,
 Ճիշտ վոր գտակն ել ծածկել ե զլխին,
 Ցերանի՛ նրա մորք, վոր ծնել
 Ու կաք ե տվել նման մի տղի...
 Այդպիսի վորդուն յերանի կտու,
 Բայց չի մեծացմի մայրը հիմրկվա...

Ճանաչում եյի, ու դեռ չեմ տեսել,
 Կարուել եմ լուր միշտ ել քո կյանքին,
 Ու ժեզ հետ ապրել ուզել եմ յես ել,
 Բայց պահել են ինձ տուն ու ընտանիք,
 Խակ վերջը, յեղբայր, ասոված խռովեց,
 Անիվը բախտիս նա ծուռ գլորեց...
 Ականջ դիր, ասեմ պատմությունը նոր,
 Ինչ վոր ինձ արեց ցավը իմ կյանքի.

Մի ամգամ բախտից, վոր յեղել եմ գոհ,
 Ինչպես հալածված փախա նրանից:
 Մի մանուկ եյի տասներկու տարվա,
 Յերբ մեր բատոնին¹ ինձ կտրեց տանից,
 ինձ ուղարկեցին պահելու տավար,
 Հայրենի տանից հեռու քշեցին:
 Յես դեռ տխրեցի, սիրուս ամպամա՛ծ,
 Առանց ծընողի դժվար եր ապրել...
 Խինդն ուրիշների՝ ծանր եր ինձ համար,
 Զուլալ արցունեն ե աչքիցը քափվել:
 Ինձ հասակակից փոքրիկ տղաներ
 Իմ արցունեն եյին յերեսավս տալիս.
 Մոռացել եյին իրենց վիշտը մեծ,
 Ինձ նման եյին նրանք ել լալիս...
 Ամաչում եյի յես ել իմ լացից
 Յեվ ընկերներից միշտ հեռու փախած՝
 Նստում եյի լուռ մի թփի տակին՝
 Արցունեք աչքիս քափում եյի ցած:
 Սեվ ամպը, սակայն, անցավ ինձանից,
 Իմ վիշտն ել ահա նա իր հետ տարավ.
 Յեվ սիրուս փոքրիկ, վոր մնշվեց ցավից,
 Վշտի փախարեն մի նոր խինդ առավ:
 Յեվ յես վարժվեցի իմ այդ նոր կյանքին,
 Վոստոստում եյի, ծիծագում, յերգում.
 Միտք չեյի անում այլևս իմ տանից,
 Ու ել ինձ համար կյանքը չեր տրտում:
 Յեղբայր, ի՞նչ խիմքով ու ի՞նչ քաղցրությամբ

¹ Բատոնո— ողարոսն, ճորտատեր:

Պրերըս ուրախ անց եյին կենում.
 Վոչինչ չունեյի այնտեղ տիվրության,
 Ընկերներս ինձ ել չեյին նեղում:
 Կով եյինք խնամում մենք հալատարիմ,
 Գործին նվիրած և յեռանդ ու սեր.
 Ու հսկում եյինք հերթով տավարին,
 Ու պահակ կանգնում մենք ամեն գիշեր:
 Յերբ վոր սարերում արևն եր քաղվում,
 Յեկ աստղերն եյին ժպում յերկնից,
 Ցրված տավարը բերում, հալափում
 Ըսկում եյինք համարել կրկին:
 Կապելուց հետո՝ անտառի ծայրում՝
 Մեր վառած հսկա խարույկի կողքին,
 Մենք նատում եյինք ուրախ ու խնդուն
 Յեկ ամեն մեկն իր ընթրիքը ձեռքին:
 Մեր կատակներից, յերգ ու ծիծաղից
 Փախչում եր նույնիսկ քռչունը ծառից.
 Բայց յերբ քունք՝ մեզ գալիս եր-պատում,
 Մեկը մեզանից հեֆյաք եր պատմում:
 Լուսարացի հետ, յերբ մուրն եր հալչում,
 Հանգչում եր դանդաղ լուսաստղը հեռվից,
 Մեզանից մեկը՝ շուտ մեզ եր կանչում,
 Փախցրնում քաղցրիկ քունք մեր աչքից:
 Վեր եյինք քռչում, և մեր ժիր ձայնից
 Արքնանում եյին քնած սար ու ձոր.
 Իրենց տավարին՝ ամենքը մեզմից
 Բաց եյին քռչում ջլուտ ձեռքերով:
 Յեկ վումանք այստեղ յափնջին զցած՝
 Գնում, ծուլուն աչքը տրորում.

Վումանք ել այնտեղ, դեմքերն ամպամած,
 Տավարը քշում ու տխուր յերգում:
 Յեկ մի վարկյանում նախիրն բառաչով
 Փովում եր հանդում կանաչ-արեվոտ,
 Ու մենք ել խաղով, յերգով ու կանչով
 Հավաքվում եյինք սառն աղբյուրի մոտ.
 Լվացվում եյինք ու քունք փախցնում,
 Զովանում մաքուր ու սառը ջրավ,
 Թուչկոտում եյինք ու իրար անցնում,
 Յեկ նախաճաշում խաղով ու պարով,
 Հետո սկսում զանազան խաղեր՝
 Քար եյինք զցում, մերբ գնդակը՝ վեր...
 Ու կեսորվա մոտ, բեզարած շոգից՝
 Ցած եյինք բերում տավարը սարից
 Ու հանգիստ տալիս Ալազան-գետում,
 Յեկ մեզ ել նրանց հետեվից նետում...
 Շատ բան եմ հիշում յես մանկությունից,
 Բայց գուրկ եմ արդեն այդ խնդությունից...
 Յերեկոյան դեմ դարձյալ նույն կարգով
 Շուրջն եյինք նստում հսկա խարույկին
 Յեկ հեֆյաք ասում գյուղական հանգով,
 Յերբ հերբ եր հասնում մեզ՝ ամեն մեկին:
 Այդ հեֆյաքներից սիրս եր փոքրկվում,
 Այսոք ել դարձյալ յես հիշում եմ լավ.
 Խինդ եյին տալիս ինձ այն հասակում
 Ու սեր գարբեցնում անցյալի համար:
 Ե՞ն, մեկը միայն այն հեֆյաքներից,
 Յես ընդունեցի գքոս մոր նման,
 Յեկ շատ-շատ բաներ ասում եր նա ինձ,

Մերք խինդ եր տալիս, մերք վիշտը, վոր կա...
 Արսենը մեր եին, Արսենը անգին,
 Վոր մեզ ե հասել հեֆյարի նման,
 Նա յեր հենց, վոր կար, իմ սիրտն ու հոգին,
 Նա եր վիշտ ու խինդ նորից ինձ հաւաք:
 Յեվ այսպես տարված Արսենի կյանքով,
 Վարմունքը նրա ինձ դուր եր գալիս.
 Ու անում եյի, յելում որեցոր,
 Յեվ Արսենության յերանի՝ տալիս:
 Յես ծաղկում եյի բույսի պես դաշտում,
 Յեվ մանկությունն իմ՝ ծաղկի պես մի զարդ:
 Տան մասին յերբեք չեյի մտածում,
 Ու մերոնց մասին չունեյի յես դարդ:
 Մի մանուկ եյի, ու փոքրիկ յես դեռ,
 Յեվ ուրախ ու գոհ՝ իմ մենակ կյանքից,
 Ու բվում եր ինձ, վոր բոլորն ինձ պես
 Գոհ եյին կյանքից ու ինձ խնդակից:
 Յես հայր ունեյի՝ քաջ ու ժրաշան,
 Յեվ անխոնջ, և ժիր և աշխատասեր.
 Շատը շատերից՝ չեր հասնի նրան,
 Մենակ եր գործում նա որ ու գիշեր:
 Նրանից արագ վոչ վոճ չեր ամի
 Դաշտում վար ու ցան և արտում ել՝ հունձ.
 Ասովածն ել նրան բարիք եր տալիս
 Ու բերքով լցնում ուունք եինավուրց:
 Յեվ բվում եր ինձ, վոր միշտ ել այդպես
 Հայրը սրտագոհ կիմներ կյանքից:
 Սակայն վերջն արդեն բախտը դառնապես
 Նրան յետ զցեց իր արդար նամփից...

Յեվ դու յել, յեղբայր, լսած կլինես,
 Վոր բախտը նորովի՝ փոփոխվում ե հար.
 Թե նարոք յերեկ բախտ ե ունեցել,
 Նույնն այսոր լինել դժվա՛ր ե, դժվա՛ր:
 Ցանկալ ու հուսալ դատարկ ե և զուր,
 Խարուսիկ ե միշտ մեր հույսը ներքին.
 Բախտն ու հույսը մեր՝ նորով, գյուղացու՝
 Յերկար չի մնա մի տիրոջ ձեռքին:
 Յեվ անց եր կենում ու հօրըս կյանքին
 Դարդ ու ցավ թերում ժամանակն իր հետ.
 Հայրս ծերացավ, իր աշխատանքից՝
 Հալ ու մաշ յեղած. այլևս ուժ չուներ...
 Թեև նա ուներ ցանկություն մի եին,
 Միշտ սեր դեպի գործ՝ ջանալ ու տռկալ,—
 Բայց տարիեն իրեն զլկել եր ուժից,
 Դարձել եր այդպես նա ուժից ընկած:
 Տեսնում եր արդեն հայրս խեղն ու լուռ,
 Վոր ինքը զրկված ուժ ու յեռանդից
 Իր ոջանը եին միշտ յետ և գնում,
 Զրկվում ե ահա առաջվա տանից:
 Այդ ծերության հետ խեղն հօրըս գլխով
 Մի դժրախտություն, մի ցավ ել անցավ,
 Խոր ծերության մեջ դողերոցքը խոր
 Կապվեց նրա հետ, դանաւով նոր ցավ:
 Այսպես ե, յեղբայր, բախտը գյուղացու,
 Սեվ ու դժնդակ և անգութ ե նա.
 Առնեն մի անգամ թե ծռվեց կյանքում՝
 Դրանից հետո միշտ ծուռ կմնա:
 Յես բան տարու մի յերիտասարդ...

Զորե՛ղ եյի շատ ընկեր տղերից .
 Հսկել տան գործին, վարպես տղամարդ,
 Այսպիս ամեն ինչ կգար իմ ձեռքից :
 Տիրոջ¹ մոտ եյի, սակայն ինձ նորից
 Տուն չեր արձակում, չեր տալիս դադար .
 Յես տիրոջ համար զահում եյի ինձ,
 Յեկ յետ եր գնում ընտանիքս հար :

Մի անգամ, արդեն լուռ ու եկվանդոս,
 Նիհարած, դեղնած և ուժից ընկած՝
 Խեղճ հայրըս տրտում գնաց տիրոջ մոտ
 Ազատանիք արտվ, պարատեց յերկար :

Ճիշտ վոր տերը մեր մի վայրի գազան՝
 Չուներ մարդկային վոչ սիրտ, վոչ հոգի,
 Հիմար ու կոպիտ և ահ ու զարգանդ—
 Սարսափ եր ազդում այդպես ամենին :
 Ի՞նչ յերկարացնեմ, բավադի վորդին
 Լավն ի՞նչ ե, քե կա, վոր վասն ինչ լինի ...
 Հայրըս սրտամաշ, լուռ ու վշտագին
 Նման տիրոջ մոտ գնաց իր բանին :
 Յեկ ասաց. «Տե՛ր իմ, ֆեղ մատաղ լինեմ.
 Ել չկարացի պատել տան գործին ...
 Իմ վորդուն զիշիք... ու չտխրեցնես,
 Հենց չկործանես իմ ոչախը իին» :

ՏԵՐ

— Ի՞նչ ես դուրս տալիս :

¹ Տիրոջս— այսինքն ճորտատիրոջս : Վրացերեն՝
 բատոնո :

ՀԱՅՐ


— Ի սեր կյանքիդ, սեր,
 Միայն Զաքրոյիս դու տուն արձակիր,
 Վոր վոտի կանգնենք քանդկած տունը մեր,
 Հետո մեզ վրա ինչ վոր ուզես, դիր .
 Յեկ կոռ ու բեզյառ, տասանորդ ու տուրք,
 Մեկի տեղ յերկուս մենք սիրով կտանի,
 Թե վոր յետ ընկած մեր ոչախն ու դուռ
 Կարանիք յետ բերել, մարդ-իսան դատանիք :

ՏԵՐ

— Դա վոր չլիներ դու իմ երամանից
 Կարայի՞ք փախչել ու հարկը չտալ .
 Եդ վո՞նց ասացիր, պառավ շուն՝ շանից,
 Միրե՞ նման բան մտիդ մեջին կար :

ՀԱՅՐ

Եդ մասին իսկի յես չեմ մտածել,
 Բարկությունը քո՝ սիրտըս չի տանչի ...
 Սակայն ասա՛ ինձ, քո ցավը տանեմ,
 Ի՞նչով ծառայեմ, յերբ չունեմ վոչինչ :
 Յնվ աստված գիտի, վոր յես եկվանդոս,
 Զրկվեցի արդեն ուժից ու հալից ...
 Յես մենակ, անզոր... յեկել եմ ֆեղ մոտ,
 Ու վորդուս համար՝ նեղություն տալիս ...
 Քանի վոր ուժ կար, յես չեմ զլացել,
 Ու տուն եմ պահել առանց դարդ ու ցավ .
 Քրտիմեն իմ նակուց իշել ե, հոսել,
 Բայց, ավա՛գ, ամեն, ամե՛ն ինչ անցավ :
 Հիմի յես անզոր, աննառ մենաց



Ու ամժամանակ խորը ծերացած,
Տե՛ս, ել չեմ կարող հսկել տուն-տեղիս,
Աստված ել զիտի... յե՛տ դարձրու տղիս...
Ու կործանումից տուն ու տեղըս հին
Այդպես ազատել գուցե կարենամ.
Թե աստված սիրես, ինձ մի կործանի,
Քանի մարդամեջ ապրում եմ ու կամ:
Հոգին եմ տվել իմ յեռանդը մեծ,
Նա յե՛ ինձ գրկել ուժ ու յեռանդից,
Քրտինքը զուլալ նրան եմ տվել,
Խոկ այսոր ահա նաբում եմ դարդից:
Յեկ լուժը չարքաշ յեղել ե ուսիս,
Ու վոչ մի բապէ չեմ դրել այն վար,
Տվել եմ ամբողջ ուժը տուն-տեղիս,
Միքե՞ այս անտեր սեկ որվա համար:
Յեկ այսոր, իհմի, ասա; ի՞նչ անեմ,
Վոր զուրկ չմնամ յես ամեն ինչից.
Գրառատ յեղիք, քո ցավը տանեմ,
Խղճա՛ ինձ, տեր իմ, և վորդուս զիշիք...
ՏԵՐ

— Հետո ո՞ւմ հանձնեմ տավարը նրա,
Ու նման հոտաղ նա՛րեմ վո՞րսեղից.
ԶԵ, ֆեղ Զաքրոյին յես յերեք չեմ տա,
Թեկուզ և գրկվես դու տուն ու տեղից:
Տեսեք, պառավ շունն ինչպէ՞ս ե հաջում,
Իրենը ինմից լա՞վ ե նանաչում...
Թե, «Յես մեկն ունեմ»
«Հազարը կուզեմ»:

ՀԱՅՐ

— Քոնը ֆեղ լինի, դու ի՞մը տուր ինձ,
Յես իմն եմ ուզում, ել ուրիշ վոչինչ:

ՏԵՐ

— Կորիք, ավանակ, հեռացի՛ր ինձնից:

ՀԱՅՐ

— Վոր կորչեմ ֆեղնից, ել ո՞ւմ յես դիմեմ,
Յեկ ել ինձ՝ յեղնիս ո՞վ ե ոգնելու.
Յես մենակ ինչպէ՞ս տունըս տե՛զ դնեմ,
Ծերե դու վորդուս ինձ չես զիշելու:
Ուրիշ կերպ, ասա, ել ինչպէ՞ս անեմ,
Ասա, հրամայիք, քո ցավը տանեմ:

ՏԵՐ

— Հոգիդ ել դուրս գա, յես դարդ չեմ անի,
Ինչ կուզես, արա, գլուխդ քարին:

ՀԱՅՐ

— Գլուխըս քարի՞ն... Եդ ո՞վ ե տեսել,
Եդ ի՞նչ ես ասում, յեղավ պառասխա՞ն...
Ապրում մարդամեջ ու մարդ ենք մենք ել,
Յեկ ապրել ե պետք ու ապրելու բան... ✓

ՏԵՐ

— Լոփ՛ր, պառավ շուն... պառավ շուն՝ շանից...
Թե չե ծեծելով դուքս կանեմ տանից...
Չեմ նայի, ծերուկ, եդ քո հասակին...
Փայտո՞վ կստանաս պառասխան խոսքիդ...

ՀԱՅՐ

— Վո՞նց թէ կըստանամ... յեվ սոված դու ինձ
Յեվ դատարկ տափին քողնում ես խեղնիս,
Զրկելով ցամաք մի պատռ հացից,
Դատաստա՞ն ե սա, թէ չե մի վոճիք:
Վորդին կարող ե ծեր հորը փրկել,
Նրան եդ բանից գրկում ես դու, տեր...
Դու իմ հարազատ վորդուս չես տալիս,
Վոր նա ինձ փրկի, ծերության ժամին,
Ու իմ նիշտ խոսքին դեմ ես դուրս գալիս.
Թո՛ւ քո նամուսին, կարգ ու կանոնին»...

Այս եր, վոր յեղբայր, մեզ դադեց նորից,
Վշտով անջատեց վորդուն իր հորից.
Կասես, թէ ինչո՞ւ այդպես խիստ խոսեց,
Սակայն վո՞նց աներ իր ցալերի հետ:
Կարծո՞ւմ ես, թէ ֆիչ աղաչեց նրան,
Այնքան աղաչեց, ել խոսք չմնաց...
Բայց ինչպես յերկար, ինչպես մի լեռ-ժար
Չփափկեց իսկի ու չիշավ նա ցած:
Դեհ, մարդ եր նա յել... ել չհամբերեց,
Սիրուր հուսահատ, տվուր ու տրտում.
Անարդարության վրդովմունքը մեծ,—
Ամեն ինչ բափեց, ինչ վոր կար սրտում:
Թշնամու նման՝ իր չիրխի կորով
Սկսեց ծեծել հորը, տերը մեր...
Բայց պետք ե ասեմ, հայրիկիս վոչ վոք
Իրեն վողջ կյանքում գետնով չեր տվել:
Ու նրա պես չեր վոչ վոք ինքնասեր,
Ամորից կարմրեց, սիրուր բորբոքվեց...

Յեվ ձեռքը տարավ... Բայց ել ուժ չուներ,
Սակայն նա ձեռքը դեպ վեր բարձրացրեց.
Նա տիրոջ զլսին ի՞նչպիս թէ գարկի.
«Տղե՛ր, նիպոտնե՞ր, տվե՛մ, հա տվե՛մ»:
Ու աղքերացու, հորը պես մարդիկ
Սլսեցին նրան քաշել, քաշքշել...
Ճիպոտով ծեծեցին հորս հիվանդոտ,
Վոր անուժ ընկալ նրանց վոտի մոտ...
Տանջանքը նրա ինձ վիշտ ե տալիս,
Ու սիրտս տանջում, յերբ միտս ե գալիս...
Հայրը չփրկվեց ծերության համար, ||
Միրուքը ներմակ՝ չազատեց նրան.
Չփրկվեց մարդով, ասործու կամքով,
Հեվա՛ց, հեծկլտա՛ց մեծ չարչանենով...
Մոտն եյի կանգնած յես՝ խեղն ու կրակ...»

Ու խոր փղձկոցով մրբ-մրբաց այսպես,
Հետո հառաչեց ու գլուխը կախ՝
Խորը տիխությամբ լոեց վերջապես:
Վեր քոավ կակոն ցասման կրակուլ,
Նայեց Զաքրոյին լուռ աչքի տակով
Ու հանդիմանեց, յերբ վառվեց հոգին.
— Կանգնած ես յեղել, — ասում ես կողքին,
Յեվ քույլ տվիր դու անարգ քշնամուն՝
Հորդդ տանջանքի նիպոտնե՞ր տալու:
Ասա, կնարմատ, ի՞նչ եյիր անում,
Քեզ ի՞նչ եր ասում սիրուրդ եդ ժամին,
Մոտը լինեյի, կընկնեյիր և դու,
Յեվ տերբդ՝ գազան, վորպես քշնամի...
Ի՞նչ եյիր անում, նայում ու լոռ՞ւմ,

Թե ի՞նչպես եյին հորըդ քրքրում...
Թո՞ւ ք նամուսին, հայր ու վորդուքյան,
Թո՞ւ ք անուեին ու ք մարդուքյան...
Հորդ եյին ծեծում, ձայն չեյիր հանում,
Այդ՝ աչքիդ առաջ վո՞նց եյիր տանում...
Թուրըդ վո՞ր որվա համար ես կապել,
Վոր կտոր-կտոր գետին չես բափել
Այդ ք լրացած ու դաժան տիրոշ:
Ու դու վոր այդ ք խայտառակ թրավ
Յեկել ես ինձ մոտ, ինչպե՞ս սիրու առար:
Գնա՛, մի՛ անի ինձ ամոքահար...
Քեզնից ավազակ չի լինի յերբեք,
Մնվել ես, վորպես կինարմատի մեկ,
Թո՞ւ ք մարդուքյան:

ԶԻԱՎՈՐ

— Այդպես մի՛ խռովիր,
Դեռ դու Զաքրոյիս լավ չես նանաչել,
Ու շատ-շատերից յես յետ չեմ ընկնի,
Վոչ ել կակոյի քրից կփալչեմ:
Իմ թուրը այդպես մի խայտառակիր
Ու ինձ ել յերբեք շասես կինարմատ.
Այդպես մի՛ ծաղրիր... Յեկ ինձ ականջ դիր:
Մոտ եյի կանգնած յես՝ խեղն ու կրակ...
Մինչև տերը մեր՝ ձեռքով կծեծեր,
Քրքրում եյի, ինձնից բուրդ շինում,
«Լսալսիր» ճայնը ականջս եր ընկել
Յեկ ինձ կանգնեցնել դժվար եր լինում:
Նրան սպանելով՝ գիտեյի արդեն՝

Հողին կտային հորս՝ աչքը բաց,
Պատճառը մահվան կլինեյի յես.
Թե չսպանեյի, հորս ցավն եր մեծ,
Մնում եյի յես յերկու կրակի մեջ:
Յեվ այն ժամանակ, յերբ վոր գետնեցին,
Ճիպտով զարկեցին, տանջեցին անվերջ,
Աչքս մքազնեց, սիրտը թունդ վառվեց,
Խվույն դեպ հրացան թռա անվեհեր.
Յեվ դեն գցեցի յափնչիս ուսից
Ու տիրոշ կանչին՝ «զարկիր, հա զարկիր»
Գնդակս վզզաց ու խինդ տվալ ինձ,
Ու սիրտը լոեց զարշ կրծքի տակին.
Որորվեց ընկակ զազան տերը մեր,
Վոր մորմոն տվակ, թե մեզ, թե իրեն:

ԿՈԿՈ

— Արեվի՞ն մեռնեմ, ֆեզ ով վոր ծննց,
Հենց մարդ ես յեղել, թրիդ սազական...
Իզուր չե, վոր դու մոր կար ես ծծել,
Իզուր չե, վոր դու ինձ մոտ հյուր յեկար:
Աստված թռ որհնի ու պահի նրան,
Ով վոր զավակ է ծծել ֆեզ նման,
Սիրում եմ, յերբայր, ֆեզ սիս տղամարդ,
Ինչ առաջ ասի, ինձ ծանր ե զալիս.
Ներիր, ամոքից ֆիչ ե մնացել
Կակն ք առաջ գլուխ խոնարհի:

ԶԻԱՎՈՐ

— Միքե՞ն արժանի կարող ե լինել
Հոր վրեժն արյան՝ այդ գովառնելին.

Չե՞ վոր ամեն մարդ հենց այդպես կանեք,
 Տղամարդ լինեք, թե վախկու մի կին:
 Վոր կշտամբեցիր, ի գուր եր, տեսա՞ր,
 Իգուր և նույնպես այժմ ել գովասանք:
 Սակայն, եհ, Կակո... այդ վոր արեցի,
 Զբուժեց յերբեք սրտիս ցավը մեծ.
 Այն, վոր հոր համար կյանքըս զոհեցի,
 Մահամերձ հորս վաշնչով չոզնեց:
 Մոռացել եյի ինձ այն ժամանակ,
 Ու մնում եյի յես վտանգի տակ...
 Հորս մոտ քուա... ընկած եր անշունչ:
 Ծունկըս քուլացավ, սիրտըս քունդ առավ,
 Խեղնն ամբողջովին կապտած, լուռ ու մունջ,
 Ընկած եր գետին, մնացել անշարժ...
 Հայրս ել չկար, մեռել եր արդեն՝
 Անժամ, աննաշակ՝ տիրոջ նիպտի տակ...
 Բայց, ինչ վոր յեղավ, ել սրանից դեն
 Ճիշելն՝ իսկապես դժոխվ ե, կրակ»:

Յեվ յերբ վերջացրեց, Զաքրոն դառնացած
 Ընկավ ու փովեց՝ յերեսը զետնին,
 Յեվ այսպիս յերկար, լուռ ընկած եր նա
 Տառապանեների ծամրության տակին:
 Յեվ նրա համար Կակոն ել տլորեց,
 Յերկուսն ել մեկտեղ մի վշտով շնչող...
 Թե յերկու սրտին ի՞նչ խոր վիշտ պատեց,
 Յերկայի՛ր, ըզգա՛, ընթերցո՛ղ:

11-ն դեկտեմբերի, 1860 թ.

Պետերբուրգ.



ԳԻՆԸ 75 ԿՈՊ.

12-20

И. ЧАВЧАВАДЗЕ
Разбойник како
Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.



74.640